Հավելված N 2
ՀՀ կառավարության 2023 թվականի
հունվարի 19-ի N 76 - Ն որոշման

«Հավելված N 6
ՀՀ կառավարության 2008 թվականի
հունվարի 10-ի N 113-Ն որոշման

ԱՂՄԿՈՏ ԳՈՏԻՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոններով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհներին, բնակավայրերի փողոցներում (այսուհետ՝ ճանապարհներ) աղմկոտ գոտիների տեղակայման պահանջները և դրանց կիրառման և ճանապարհային երթևեկության կազմակերպման այլ միջոցներով դրանք կահավորելու կանոնները (այսուհետ՝ կանոններ):

2. Ճանապարհների և դրանց առանձին տեղամասերում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան ընտրված կազմակերպությունների կողմից աղմկոտ գոտիները տեղակայվում են համապատասխանաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմնի կամ համայնքի պատվիրակված նախագծի համաձայն՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության ոստիկանության հետ:

3. Սույն կանոններում կիրառվում է հետևյալ հասկացությունը՝

Աղմկոտ գոտի՝ երթևեկելի մասի վրա տեղակայված ՃԵԿ տեխնիկական միջոց, որն ավտոմոբիլների կախոցում վիբրացիա առաջացնելու հետևանքով դրդում է վարորդներին նվազեցնել երթևեկության արագությունը և բարձրացնել ուշադրությունը:

4. Սույն կանոնների գործողությունը տարածվում է Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական և ոչ պետական ճանապարհների վրա:

II. ԱՂՄԿՈՏ ԳՈՏԻՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

5. Համաձայն տեխնիկական պահանջների և դրանց նախագծման, աղմկոտ գոտիները պետք է համապատասխանեն սույն կանոնների, ԳՕՍՏ 33025-2014 «Ավտոմոբիլային ճանապարհներ ընդհանուր կիրառության. Աղմուկային գծեր. Տեխնիկական պայմաններ» և ԳՕՍՏ 33151-2014 «Ավտոմոբիլային ճանապարհներ ընդհանուր կիրառության. Տեղակայման տարրեր. Տեխնիկական պահանջներ. Կիրառման կանոններ» ստանդարտների պահանջներին:

6. Ճանապարհի առանցքի երկայնքով և ճամփեզրերի եզրագծերի վրա թույլատրվում է տեղադրել երկայնական աղմկոտ գոտիներ՝ փոքր շառավղով հորիզոնական կորով երկգոտի ճանապարհների հատվածներում ու 1000 մետր և ավելի երկարությամբ ճանապարհների ուղիղ հորիզոնական հատվածներում:

7. Երկայնական աղմկոտ գոտիներ չեն թույլատրվում տեղադրել՝

1) կամուրջների, ուղեանցների և դրանց մոտեցումների վրա.

2) երթևեկելի մասի նեղացման վայրերում.

3) երկգոտի ճանապարհների այն հատվածներում, որտեղ թույլատրվում է վազանցը.

4) խաչմերուկներում և հատումներում, ինչպես նաև խաչմերուկի սահմանից 10,0 մ-ից պակաս հեռավորության վրա.

5) ճանապարհների աղմուկի մակարդակի սահմանափակում ունեցող հատվածներում:

8. Լայնական աղմկոտ գոտիները թույլատրվում են տեղադրել՝

1) չկարգավորվող հետիոտնային անցումներից առաջ.

2) երկաթուղային գծանցներից առաջ՝ առանց արգելափակոցի.

3) սահմանափակ տեսանելիությամբ նույն մակարդակի չկարգավորվող խաչմերուկներից և հատումներից առաջ.

4) առավել վտանգավոր տեղամասերից առաջ (վտանգավոր շրջադարձեր, վայրէջքներ, անբավարար տեսանելիությամբ հատվածներ և այլն), որտեղ անհրաժեշտ է հարկադրաբար նվազեցնել երթևեկության արագությունը:

9. Չի թույլատրվում լայնական աղմկոտ գոտիները տեղադրել ճանապարհների այն հատվածներում որտեղ առկա է աղմուկի մակարդակի սահմանափակում:

10. Այն վայրերում, որտեղ իրականացվում են լայնական աղմկոտ գոտիներ, ճանապարհային նշանները տեղադրվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N 1699-Ն որոշման պահանջներին համապատասխան:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

19.01.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ